ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՎԻՄԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***ԺԵ.-ԺԷ. դդ. մի շարք վիմագրերում հանդիպում ենք կաթողիկոսների հիշատակությունների, որոնց անունները ներառված չեն Ամենայն Հայոց հայրապետների անվանացանկում՝ Գավազանագրքում: Զընդգրկվելու պատճառն էր այդ կաթողիկոսների՝ ազգային-եկեղեցական կամ եպիսկոպոսաց ժողովով ընտրված եւ վավերացված չլինելը: Դրանք, այսպես կոչված, աթոռակից կաթողիկոսներն էին, որոնք նշանակվում էին Ամենայն Հայոց հայրապետների կողմից: Այդպիսի նշանակումները, իբր, միտված էին քաղաքական անբարենպաստ պայմաններում բարձագույն հոգեւոր իշխանության պահպանմանը, բայց իրականում ԺԵ. դ. կեսին ձեւավորված այդ երեւույթը նախ եւ առաջ արդյունք էր 1441 թ. Վաղարշապատում վերահաստատված հայրապետական աթոռին տիրանալու պայքարի:*

Հայ Եկեղեցու պատմության մեջ աթոռակից կաթողիկոսության նախադեպը կարծես տեսնում ենք ԺԱ. դ. կեսին Պետրոս Գետադարձի (1019-1058 թթ.) պարագայում[1]*:*

Այն արտացոլված է Մրենի հետեւյալ արձանագրության սկզբնամասում. «† ՆՂ. (1041) թուականութեանս Հայոց ի հայրապետութեան տեառն Պետրոսի եւ Խաչկա Հայոց կաթողիկոսաց...»[2]*:*

---

[1] Ավելի վաղ՝ Դ. դ., Ներսես Մեծից (353-373 թթ.) առաջ եւ նրա բացակայությամբ կաթողիկոսական տեղապահությունը վարող Շահակ Աղբիանոսյանը (հետագայում՝ Շահակ Մանազկերտցի կաթողիկոս՝ 373-377 թթ.) եպիսկոպոս էր (տես **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., Երեւան, 2001, էջ 251-252): Պարսից արքունիքի կողմից 432 թ. Սահակ Պարթեւին (387-439 թթ.) աթոռակից նշանակված ասորի Շամուելին (Շմուել՝ 432-437թթ.) Մ. արք. Օրմանյանն անվանում է «հակաթոռ կաթողիկոս» (տես անդ, էջ 354): Պետրոս Գետադարձի՝ հայրապետական աթոռից ժամանակավորապես հեռացվելու եւ 1038-1040 թթ. հայոց կաթողիկոս Դիոսկորոսի մասին տես **Ա. Մանուչարյան**, Դիոսկորոս Սանահնեցու կաթողիկոսության ժամանակի ճշգրտումն ըստ Թալինի վիմագրի, «Հայ աստվածաբան», Երեւան, 2013, էջ 54-57:

[2] **И. Орбели**, Надписи Мрена, «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա., Երեւան, 1974, էջ 36:

Այս վիմագիրը Հայոց Եկեղեցու պատմության ուսումնասիրման կարեւորագույն սկզբնաղբյուր է, քանի որ փաստում է հետագայի Հայոց Մեծաց կաթողիկոս Խաչիկ Բ. Անեցու (1058-1065 թթ.)՝ ավելի վաղ աթոռակից ձեռնադրված լինելը՝ 1041 թ., քան ընդունված է կարծել: Արձանագրությունը միաժամանակ համահունչ է պատմիչի այն վկայությանը, որ Խաչիկ Անեցին «զձեռնադրութիւն հայրապետութեանն վաղընջուց ընկալեալ էր»[3]*, ինչպես զուգահեռել է Մ. արք. Օրմանյանը*[4]*: Հայ Եկեղեցու պատմության անխոնջ ուսումնասիրողը թեեւ Պետրոս Գետադարձի կողմից քրոջ կրտսեր որդուն՝ Խաչիկին (ավագը՝ Անանիան, բյուզանդացիների կողմից տարվել էր Կոստանդնուպոլիս), կաթողիկոսական աստիճան շնորհելու եւ օծելու ժամանակը համարում է 1046 թ., սակայն կատարում է հետեւյալ ուշագրավ համեմատությունը. «Պետրոսի այդ ըրածը հիմնովին կը տարբերէր Սարգիս կաթողիկոսի (990-1019 թթ.՝ Ա. Մ.) իրեն համար ըրածէն... Սարգիս, պաշտօնապէս գործէ քաշուելով, ամենայն ինչ Պետրոսի կը թողուր, մինչ Պետրոս, աստիճանն ու գործը իրեն վրայ պահելով, իրեն լիազօր տեղակալ եւ փոխանորդ կամ աթոռակից մը կը հաստատէր, որ կարենայ ըստ ամենայնի եւ յամենայնի կաթողիկոսական պաշտօնը կատարել բուն կաթողիկոսի բացակայութեան ատեն»*[5]*:*

Այդ բացակայության պատճառն էր, որ ստիպեց Գրիգոր Բ. Վկայասերին (1066-1105 թթ.)՝ իրեն աթոռակից կաթողիկոս նշանակել Գեւորգ Լոռեցուն (1066-1072 թթ.)[6]*: Միաժամանակ Գրիգոր Բ. Վկայասերի օրոք այս ու այնտեղ ստեղծվեցին կաթողիկոսական մի շարք աթոռներ (Հոնի, Մարաշ, բուն Հայաստան), որոնք արդյունք էին Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայրենիքից զանգվածային արտագաղթի, տարբեր վայրերում հայության կենտրոնացման եւ նրանց վրա կաթողի-*

---

[3] «Պատմութիւն Արիստակէսի Լաստիւերտցւոյ», աշխ.՝ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 82:

[4] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Ա., էջ 1468:

[5] Անդ, էջ 1443: Ի դեպ, Պետրոս Գետադարձը թաղված է ոչ թե Սեբաստիայում, այլ՝ Վարագավանքում, ինչը վկայում է այդտեղ նրա տապանի առկայությունը (տես **Հ. Ոսկեան**, Վասպուրական-Վանի վանքերը, մասն Ա., Վիեննա, 1940, էջ 273): Այս հանգամանքը որոշ չափով լույս է սփռում Պետրոս Գետադարձի ծագման վրա՝ հուշելով, որ նա, ըստ էության, կաթողիկոսության է կանչվել Վարագավանքի կրոնավորության շրջանից:

[6] Ուշադրության արժանի մի հանգամանք կա. Ամենայն Հայոց կաթողիկոսների Գավազանագրքում, ի շարս Գեւորգ անունը կրող հայրապետների՝ Գեւորգ Ա. Բյուրականցի (792-795 թթ.), Գեւորգ Բ. Գառնեցի (877-897 թթ.), Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866-1882 թթ.), Գեւորգ Ե. Սուրենյանց (1911-1930 թթ.), Գեւորգ Զ. Չորեքչյան (1945-1954 թթ.), բացակայում է Գեւորգ Գ.-ը (տես «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 462-463 թթ.): Արդյո՞ք բացակայող Գ. թվահամարի տակ չպետք է նկատի ունենանք Գեւորգ Լոռեցուն (1066-1072 թթ.):

կոսական իշխանության թույլ հսկողության: Բարեբախտաբար, դրանք արագորեն վերացան Բարսեղ Անեցու՝ հայոց պառակտված նվիրապետության միասնականության վերականգնմանն ուղղված ջանքերի գնով:

Մի քանի կաթողիկոսների առկայության ականատեսն ենք լինում ԺԳ. դարասկզբին (Հռոմկլայի, Սսի, Սեբաստիայի, Անիի): Այս անգամ էլ ազգային միասնականությունը ջլատող, Կիլիկիայի հայկական նորաստեղծ թագավորությունը թուլացնող հոգեւոր այդ պառակտումը վերացավ ազգային մտածողությամբ օժտված գործիչների շնորհիվ:

Դրանից հետո շուրջ 250 տարի Հայոց Եկեղեցում աթոռակից կաթողիկոս չի հիշատակվում՝ մինչեւ Գրիգոր Ժ. Ջալալբեկյանցը (1443-1465 թթ.):

Ժամանակին Ս. Սաղումյանն Առինջի ամրոցի ավերակներում ընդօրինակել է վեց գեղագիր փակագրություն, որոնցից երեքը վերաբերում են հայոց կաթողիկոսներին: Ընդ որում, միայն մեկի հիշատակությունն է Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Հովհաննես Է. Աջակրի (1474-1484 թթ.), իսկ մյուս երկուսը՝ աթոռակիցներինն է: Սրանցից առաջինը գտնվում է ամրոցի արեւելյան պատի ճախ թեւում: Այն փակագրերի հմուտ վերծանող Ս. Սաղումյանի բացմամբ ընթերցվում է. «ԱՐԻՍՏԱԿԵՍ Գ. ԿԱԹՈՂԻԿՈՍ»[7]: *Վիմագրագետի հղմամբ՝ «Հ. Շահխաթունյանը նրա հայրապետությունը դնում է 1490-1498 թթ., իսկ Հ. Անասյանը՝ 1468-1475 թթ.»[8]:*

Մ. արք. Օրմանյանի պարզաբանմամբ՝ «...կը համաձայնինք Արիստակէս Գ. ըսել, բայց լոկ աթոռակցութեան իրաւունքով: Դավրիժեցին զայն կը նշանակէ 1493-ին, եւ Երեւանցին՝ 1492-ին: Սակայն ուրիշ յիշատակարաններ 1486-է ունին անոր անունը, ինչ որ կը ցուցանէ թէ Յովհաննէսի (Աջակրի՝ Ա. Մ.) մեկնելէն քիչ ետքը, Սարգիս (Գ. Մյուսայլ՝ Ա. Մ.) պէտք զգացած է իրեն աթոռակից մը առնել, որով ինքզինքը բուն գահակալ նկատած է... Իսկ 1499-ին միւս աթոռակիցը յիշած ատեն, Դավրիժեցին այլ եւս Արիստակէս անունը չի տար, որով կը թելադրուինք հետեւեցնել, թէ Արիստակէս Գ. 1499 կամ քիչ առաջ վախճանած է...»[9]:

Արիստակես Գ.-ի կաթողիկոսությունը, միայն աթոռակցության իրավունքով, վավերական է դառնում այն հանգամանքով, որ մինչ նա այդ անվամբ հայրապետներ, ըստ Գավազանագրքի, եղել են երկուսը՝ Արիստակես Ա. Պարթեւ (325-333 թթ.), Արիստակես Բ. Աթոռակալ (1465-1469 թթ.):

---

[7] **Ս. Սաղումյան**, Փակագրությունը հայ վիմագրության մեջ, ԼՀԳ, թ. 3, 1980, էջ 79:

[8] Անդ. նաեւ՝ **Յովհ. եպս. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 2014, էջ 150. **Հ. Անասյան**, Հայկական մատենագիտություն, հ. Բ., Երեւան, 1976, էջ 748-749:

[9] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 2567:

Մի կարեւոր դիտողություն եւս. հայագիտության մեջ ընդունված է այն տեսակետը, թե կաթողիկոսներին թվահամարի մակդիրով կոչելն սկսվել է Հովհաննես Ը. Կարբեցուց՝ 1831-1842 թթ.[10]*: Բայց, ինչպես տեսնում ենք, թվահամարի մակդիրի ոչ պաշտոնական կիրառությունը եղել է ավելի վաղ ժամանակներից:*

Աթոռակցի հիշատակությամբ երկրորդ փակագիրն է՝ «ԱՆԱՆԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ»[11]: *Ս. Սաղումյանի բացատրությամբ՝ «Այս շրջանում էջմիածնում համանուն կաթողիկոս չի նշվում, սակայն, թվում է, թե վերծանությունը ստույգ է»*[12]*: Իրավամբ, Առաքել Դավրիժեցին, որպես Սարգիս Գ. Մյուսայլին աթոռակից կաթողիկոսներ, հիշատակում է 1499 թ. Տեր Թադեւոսին, 1504-ին՝ Տեր Եղիշեին եւ 1506-ին՝ Տեր Ներսեսին*[13]*:*

Ս. Սաղումյանի գնահատմամբ՝ «Հայոց կաթողիկոսները, մեծ կարեւորություն տալով հզոր ամրոցներից զրկված Արարատյան աշխարհի պաշտպանությանը, անընդմեջ ջանքեր են գործադրել Առինջի բերդի ամրացման համար: Դրանց թվում զգալի է եղել նաեւ Անանիայի գործունեությունը, որի անվան փակագիրը առաջինների միջեւ է՝ կից Ջ./ԽԸ. (1499) թվակիր արձանագրությանը»[14]*: Այդ թվագրության գրչագրի անմիջապես ներքեւում փորագրված է.* «ԱՎԱՆԻ՝ ՎԻՃԱԿ...»[15]:

Հետեւապես՝ Անանիան էջմիածին է կանչվել Ավանի թեմից: Պետք է ենթադրել, որ նրա աթոռակցությունն ընդմիջարկվել է Արիստակես Գ. կաթողիկոսով եւ Տեր Ներսեսով ու տեւել բավական կարճ՝ չբոլորելով 1499 թվականը:

Մի քանի տարի առաջ Արագածոտնի թեմի Օշականի առաջնորդարանի երկրորդ հարկի նախաշեմում՝ մի խաչքարի բեկորի վրա, ընդօրինակել ենք շրջանաձեւ փորագրված հետեւյալ արձանագրությունը.

«ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԱՌԱՔԵԼ ԿԱՅԹԼՈՂԼԻՅԿՈՍԻՆ ԵՒ ԴԱՅՐԼՈՒՅՂՆԱԲ ԶԱՔԱՐԻՆ»[16]:

Արձանագրությունը թեեւ թվական չունի, սակայն հեշտությամբ թվագրվում է հիշատակվող Առաքել Վաղարշապատցու կաթողիկոսական աթոռակցության տարիներով՝ 1576-1593 թթ.: Վերջինիս անունը եւս չի

---

[10] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 624:
[11] **Ս.Սաղումյան**, նշվ. աշխ.:
[12] Անդ:
[13] **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 343:
[14] **Ս. Սաղումյան**, նշվ. աշխ.:
[15] Տես գրչագիրը, նույն տեղում, էջ 84:
[16] Մեր դաշտային օրագրից:

ներառվել հայոց 132 հայրապետների շարքում, քանզի նա, ինչպես պարզաբանում է Հ. Աճառյանը, միայնակ կաթողիկոս չի նստել, այլ սկզբում աթոռակցել է Գրիգոր ԺԲ. Վաղարշապատցուն (1576-1590 թթ.), ապա՝ Դավիթ Դ. Վաղարշապատցուն (1590-1629 թթ.): Ըստ ականավոր լեզվաբանի՝ Առաքել Վաղարշապատցին ողջ ընթացքը անց է կացրել՝ նեղվելով օսմանյան հարկապանջներից[17]*: Հավանաբար, նյութական օգնություն ստանալու ակնկալիքով էր նա 1584 թ. մեկնել Ամիդ, որտեղ առաջնորդը մեծահռչակ վարդապետ, ուսուցչապետ, մեծահարուստների զավակ Սրապիոն Եղեսացին էր, որը հետագայում Մայր Աթոռի պարտքերը մարելու պատրաստակամությամբ՝ 1603-1604 թթ. աթոռակցեց Դավիթ Դ., Մելքիսեդեկ ու Ավետիս կաթողիկոսներին:*

Օշականի նորահայտ արձանագրության վերջում հիշատակվում է «դարուղնաբ» Զաքարը:

«Դարուղնաբ» փակագիր անսովոր ձեւը, կարծում ենք, նշանակում է էջմիածնի վանքապատկան գյուղերի կառավարումը վերահսկող պաշտոնյա: «Դարուղնաբ»-ը բարդ բառ է, որի առաջին բաղադրիչը՝ «դարուղա»-ն, ունեցել է գործակալի իմաստ, որը հետեւում էր շուկային, չափ ու կշռին, տանուտերի միջոցով հավաքում տուրքեր[18]*: Փակագրի երկրորդ արմատը՝ «նաբ»-ը, արաբերեն է, որ թարգմանվում է «ներկայացնել»* (ناب)*: Հետեւապես՝ «դարուղնաբ» պետք է հասկանալ՝ կաթողիկոսի հարկային ներկայացուցիչ:*

Երեւանի Ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատին 1609 թ. վայելչագիր արձանագրությունում «Ի թ(ա)գ(աւո)րութի(ւ)ն Շահապազին, ի իշխանութ(իւն) Ամիրգոնախանին» եպիսկոպոսապետ է հիշատակվում Մելքիսեդեկ Գառնեցին՝ «ի հայր[ա]պ(ե)տ(ու)թե(ան) տ(եառ)ն Մ(ե)լ(ի)քս(է)թ կ(ա)թ(ու)ղ(ի)կ(ո)սին...»[19]*: Նույն անձանց անունները վավերացված են նաեւ Գեղարքունիքի Մասրուց անապատի հետեւյալ վիմագրում. «Կամաւն Ա՚յ նորոգեցաւ սբ. եկեղեցին թվին ՌԿ. (1611): Ի կաթողիկոսութեան Տ՚ր. Մելիքսէթին. ի թագաւորութեան Շահապասին, ի ղանութեան Ամիրգաւնա խանին եւ մէլիքութեան Տ՚ր. Վարդանին: Ես Դաւիթ առաջնորդ վանիցս նոր ⌊ոգել ետու⌋»*[20]*:*

---

[17] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երեւան, 1942, էջ 215-216:

[18] «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. V, Երեւան, 1974, էջ 22:

[19] **Կ. Ղաֆադարյան**, Երեւան. միջնադարյան հուշարձանները եւ վիմական արձանագրությունները, Երեւան, 1975, էջ 139:

[20] «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, կազմ. Ս. Բարխուդարյան, Երեւան, 1973, էջ 249: Դավիթ շինարար եպիսկոպոսի անունը քանիցս հիշատակվում

Տարօրինակ է, որ երկու արձանագրությունում էլ պարսից Աբբաս Ա. շահի (1587-1629 թթ.), Երեւանի բեկլարբեկ Ամիր-Գունա խան Ղաջարիի (1605-1625 թթ.) եւ գավառապետ մելիք Տեր Վարդանի հետ հիշատակվում է ոչ թե Ամենայն Հայոց կաթողիկոս Դավիթ Դ. Վաղարշապատցին (1590-1629 թթ.), այլ՝ աթոռակիցը: Պատճառը ոչ թե բուն գահակալի՝ իրական կաթողիկոսի՝ 1604-1612 թթ. Սպահանում գտնվելն էր, այլ այն, ինչ հայտնում է Գրիգոր Դարանաղցին: Պատմագիրը 1600 թ.՝ երիտասարդ հասակում, Արեւմտյան Հայաստանից եկել է Արարատյան երկիր եւ առժամանակ հաստատվել կրթական, գրչական հարուստ ավանդույթներ ունեցող Սաղմոսավանքում: Նա Մյուռոնօրհնեքի արարողությանը հրավիրվում է Ս. Էջմիածին եւ օգտվելով այդ այցելությունից՝ հայտնում իր տպավորությունները. «Եւ էին երեք կաթողիկոս ի վերայ մին աթոռոյն, որ էր յոյժ անկարգութիւն. անուն առաջնոյն՝ Դաւիթ եւ երկրորդին՝ Մելքիսեդ եւ երրորդին՝ Աւետիս: Սա պարկեշտագոյն էր եւ բան վարդապետութեան[21] ունէր ի վերայ նոցա, բայց հրամանն անիմաստ եւ գազանաբարոյ Մելքիսեդին էր. ոչ օրինօք եւ կանոնովք առաքելադիր, այլ կաշառօք եւ բռնութեամբ այլազգեացն յափշտակելով ի Դաւթէն»[22]: Մի այլ տեղ էլ ասում է. «Մելքիսեդ անուն գազանաբարու»[23]: Ասել է, թե հայոց կաթողիկոսական գործերի վարույթը գտնվում էր «արկածախնդիր, փառամոլ, արծաթասէր եւ նենգամիտ»[24] Մելքիսեդեկ Գառնեցու (1593-1626 թթ.) տնօրինության ներքո:

է Շողագավանքի եւ դրան ենթակա Մասրուց անապատի վիմագրերում (տես անդ, էջ 241-251): Այս վիմագիրը ժամանակաշրջանին բնորոշ այն դեպքերից է, երբ բարձրաստիճան հոգեւորականները, ինչի մասին վկայում են նաեւ մատենագրական աղբյուրները, «տիրանում էին տանուտերերի ու մելիքների պաշտոններին» («Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. IV, Երեւան, 1972, էջ 116): Չնայած Տեր Վարդանին Գեղարքունյաց մելիքական տոհմերից մեկի՝ Աղբուղայանների կամ Պուղիկյանների ներկայացուցիչ պետք է կարծել:

[21] Անշուշտ, Սուրբ Գրոց, Հայ Եկեղեցու դավանաբանական, վարդապետական նրբություններին քաջատեղյակությունն էր պատճառը, որ աբեղահալած աղանդապետ Մեխլուի հավատաքննությամբ, Ամիր-Գունայի ներկայությամբ, Երեւանի բերդում զբաղվում է ոչ թե խանի մտերիմ եւ նրա հովանավորությունը վայելող Մելքիսեդեկը, այլ՝ Ավետիսը (1600-1611 թթ.). տես «Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն», հ. Ա., Վաղարշապատ, 1870, էջ 50:

[22] «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղացւոյ», Երուսաղէմ, 1915, էջ 52:

[23] Անդ, էջ 284:

[24] **Մ. արք. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ., էջ 2767: Մելքիսեդեկի այդ արատները հետագայում լեհահայոց փառահեղ համայնքի կաթոլիկացման եւ ուծացման պատճառը դարձան, երբ նա, աթոռակից կաթողիկոս նշանակելով իր եղբորորդի Սահակ Գառնեցուն (1623-1628 թթ.), մեկնեց Կ. Պոլիս, ապա՝ Լվով, որտեղ կաշառքով եւ կանոնների խախտմամբ կատարեց անարժան ձեռնադրություն:

Այսպիսով՝ տակավին ԺԱ. դարից քաղաքական անբարենպաստ իրավիճակի պատճառով աթոռակից կաթողիկոսի դրվագված առկայությունը ԺԵ.-ԺԷ. դդ. դարձավ երեւույթ: Թուրքմենական քոչվոր ցեղախմբերի միջեւ կռիվների, ապա՝ պարսկաթուրքական երկարատեւ պատերազմների թատերաբեմ դարձած, ավերված ու տնտեսապես քայքայված Հայաստանի հեղհեղուկ, անկայուն կացությունը բացասաբար էր անդրադառնում նվիրապետական կառույցի վրա: Բարեբախտաբար, պատմական ասպարեզ իջան ազգային մտածողությամբ օժտված գործիչներ (Մովսես Տաթեւացի, Սարգիս Սաղմոսավանեցի, Կիրակոս Տրապիզոնցի եւ այլք), որոնց անձնուրաց նվիրվածության, չմարող եռանդի եւ անդուլ ջանքերի շնորհիվ ոչ միայն կանխվեց բազմագլուխ կաթողիկոսություն երեւույթի պատմական շարունակականությունը, այլեւ սկսվեց անապատական, կրոնավորական մի շարժում, որը ծնունդ տվեց հոգեւորականության նոր, փայլուն սերնդի, դպրության ու մշակույթի վերածննդի:

РЕЗЮМЕ

В ряде лапидарных надписей 15-17-ых вв. встречаются имена католикосов, которые не включены в хронологическую таблицу католикосов Всех армян. Они являлись так называемыми сопрестольными католикосами, которых назначали в католикосы Всех армян в неблагоприятных политических условиях в качестве помощников, якобы для сохранения высшей духовной власти. Это явление довольно ослабляло армянскую церковь и, к счастью, ограничилось двумя столетиями.

SUMMARY

Several inscriptions dating back to the 15-17th centuries state the names of Catholicoses that do not appear in the list of the Catholicoses of All Armenians. Those were the so called co-thrown Catholicoses who were appointed by the Catholicos himself as His assistants to protect the spiritual power in case of the created unfavourable political situations. Such steps, nevertheless, caused to weakening of the Armenian Church. Luckily this process took place only during two hundred years.